



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

*Երևան, Կառավարական փուն 1*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 04/04**

(Ա/Ձ Տիգրան Ավետիսյանի 07.03.2018թ.-ի վարչական բողոքը բավարարելու մասին)

**Ք. ԵՐԵՎԱՆ**

**«06» ԱՊՐԻԼԻ 2018թ.**

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 19.01.2018թ. թիվ 3/4 որոշման վերաբերյալ Ա/Ձ Տիգրան Ավետիսյանի 07.03.2018թ.-ի վարչական բողոքը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.**

Ա/Ձ Տիգրան Ավետիսյանը (այսուհետ նաև՝ Բողոք բերած անձ) բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 19.01.2018թ. թիվ 3/4 որոշման (այսուհետ՝ նաև Որոշում) վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 07.03.2018թ.-ին:

Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետը (այսուհետ՝ Վարչության պետ) 26.10.2017թ. կայացրել է թիվ 2415/08 որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում)՝ Ա/Ձ Տիգրան Ավետիսյանից 764.956 ՀՀ դրամ գումարի գանձման վերաբերյալ:

Որոշումը բողոքարկվել է, սակայն Գանգատարկման հանձնաժողովի 19.01.2018թ. թիվ 3/4 որոշմամբ բողոքը մերժվել է և Վարչության պետի թիվ 2415/08 որոշումը թողնվել է անփոփոխ:

Բողոք բերած անձը նշել է, որ Որոշմամբ առաջադրված 764.956 դրամ պարտավորությունը տուգանք է, որն առաջացել է ԱԱՀ-ի գծով 2016 թվականի 4-րդ եռամսյակի հաշվարկը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու հետևանքով: Գանգատարկման հանձնաժողովի կողմից վերոնշյալ որոշման կապակցությամբ բերված գանգատը մերժել է այն պատճառաբանությամբ, որ առկա չեն նշված պարտավորությունը զիջելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան հիմքեր:

Ըստ Բողոք բերած անձի՝ 29.12.2016թ.-ին իր կողմից օտարվել է Արարատի մարզի Արգավանդ գյուղի Ծ. Իսակովի փողոցի 7 հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը: Բողոք բերած անձի պնդմամբ նշված գործարքից ԱԱՀ-ի գծով պարտավորություններ առաջանալու մասին իրեն ժամանակին չի ծանուցվել: Տեղեկանալուց հետո վերջինս ներկայացրել է հաշվարկը և վճարել է ԱԱՀ-ի գծով պարտավորության գումարը: Դրանից հետո վարչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ՝ տուգանք գանձելու համար, որն ըստ Բողոք բերած անձի, ոչ իրավաչափ է:

Որպես բողոքի փաստական հիմքեր Բողոք բերած անձը խնդրել է հաշվի առնել այն, որ ինքը 2-րդ խմբի հաշմանդամ է, ունի անչափահաս երեխա, հարկային մարմնի կողմից վարչական վարույթի և այլ հարցերի վերաբերյալ ծանուցումները ուշ են հասնում հասցեատերերին, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի ժամկետները սահմանափակ են, անձը չի հասցնում արձագանքել, ինչի արդյունքում հաշվարկվում են տույժեր և տուգանքներ:

Ըստ Բողոք բերած անձի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի պատասխանից հետևում է, որ իր գործարքի մասին համապատասխան տեղեկությունները ուշ են ստացվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մեղքով: Բացի այդ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հասցեագրված համապատասխան գրություններով առաջարկել է բոլոր այն դեպքերում, երբ գույքի օտարման գործարքներից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով առաջանում են հարկային պարտավորություններ, այդ մասին տեղեկացնել հարկ վճարողներին: Հետևաբար, եթե իրեն չեն տեղեկացրել, ՀՀ ԿԱ պետական

եկամուտների կոմիտեն տեղեկությունները մեկ այլ վարչական մարմնից՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ուշ է ստացել, ապա իր մեղքը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից, Բողոք բերած անձը խնդրել է վերացնել *(հաշվի առնելով Գանգադարկման հանձնաժողովի որոշման իրավաչափության վիճարկումը բողոքի շրջանակներում, ինչպես նաև բողոքի ընդհանուր տրամաբանությունը՝ Հանձնաժողովը նշված պահանջը գնահատում է որպես Գանգադարկման հանձնաժողովի որոշման իրավաչափության վիճարկման պահանջ)* ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի 26.10.2017թ. թիվ 2415/08 և Գանգատարկման հանձնաժողովի 19.01.2018թ. թիվ 3/4 որոշումները և դադարեցնել իրենից գումար բռնագանձելուն ուղղված գործողությունները:

## **2. Մասնակցի դիրքորոշումը.**

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2018թ.-ի ապրիլի 6-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր անհատ ձեռնարկատեր Տիգրան Ավետիսյանը:

Վերջինս լսումների ընթացքում պնդեց բողոքը և հայտարարեց, որ իր գործողություններում բացակայել է անբարեխղճությունը, քանի որ ծանուցվելու պահից իր կողմից կատարվել են հարկային պարտավորությունները:

## **3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրամադրված վարչական վարույթի նյութերում առկա է Բողոք բերած անձի կողմից 27.03.2017թ. ներկայացված՝ ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մասով ԱԱՀ-ի 2016թ. 4-րդ եռամսյակի հաշվարկ, որի 7-րդ կետով ներկայացված՝ «Ապրանքի մատակարարում համարվող գործարքի հարկվող շրջանառություն» հատվածում նշված է 23.505.000. ՀՀ դրամ, իսկ ԱԱՀ-ի գումարը՝ 3.918.283 ՀՀ դրամ:

- Վճարման 29.03.2017թ. թիվ 170329005439006 և 29.03.2017թ. թիվ 170329005538006 հանձնարարագրերի համաձայն՝ վճարող Տիրուն Վարդգեսի Ավետիկյանը «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Զվարթնոց մասնաճյուղում կատարել է վճարում՝ համապատասխանաբար 3.918.300 ՀՀ դրամի և 387.950 ՀՀ դրամի չափով: Նշված հանձնարարագրերից առաջինում «վճարման նպատակը» հատվածում նշված է՝ «ՀՀ արտ-ոդ ապրանք մատ. գործ. ԱԱՀ Տիգրան Ավետիսյան ԱԶ ՀՎՀՀ 45108343, մայր գումար», իսկ երկրորդում՝ «ՀՀ արտ-ոդ ապրանք մատ. գործ. ԱԱՀ Տիգրան Ավետիսյան ԱԶ ՀՎՀՀ 45108343, տույժ»:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանի կողմից 26.10.2017թ. կայացվել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 2415/08 որոշումը, որի համաձայն. «Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների Ա/Ձ Տիգրան Ավետիսյանի (ՀՎՀՀ 45108343, հասցե՝ Արարատ, գյուղ Արգավանդ Կենտրոնական 3 փ. 2, պետ. գրանցման համարը՝ 77.00295) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունը 02.10.2017թ. դրությամբ կազմել է 764.956 դրամ, որից տուգանք՝ 764.956 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ՝ 764.956 դրամ չկատարված պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին «12» հոկտեմբերի 2017 թվականին անհատ ձեռնարկատերը պարզաճ կերպով ծանուցվել է, սակայն վարույթի նյութերին ծանոթանալու համար չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել:

Արդյունքում ժամանակին չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 764.956 դրամ, որից ԱԱՀ-ի տուգանք՝ 764.956 դրամ, որն առաջացել է 2016թ. 4-րդ եռամսյակի հաշվարկը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու հետևանքով:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարփադիր և անհատույց վճար է: Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 11-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ և 88-րդ հոդվածներով՝ որոշվել է Ա/Ձ Տիգրան Ավետիսյանից գանձել 764.956 ՀՀ դրամ պարտավորության գումար»:

- Համաձայն փոստային ծրարի հանձնման թիվ AG005531990AM ծանուցագրի՝ Բողոք բերած անձին է հանձնվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի 26.10.2017թ. թիվ 2415/08 որոշումը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Խաչատրյանի կողմից 03.11.2017թ. կազմված արձանագրության համաձայն. «ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության ՀԳ բաժնի գլխավոր մասնագետ՝ Անահիտ Խաչատրյանս, կազմեցի սույն արձանագրությունն այն մասին, որ Ա/Ձ Տիգրան Ավետիսյանը /ՀՎՀՀ 45108343/ հասցե՝ Արարատի մարզ, գ. Արգավանդ, Կենտրոնական 3 փողոց 2, անձնագիր՝ AG0379346, 02.10.2017 թվականի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով հարուցված 01.10.2017 թվականի վարչական վարույթին ներկայացել է և ունի դիրքորոշում, որը կներկայացվի պետական եկամուտների կոմիտե գրավոր»:

Նշված արձանագրության «Իրավախախտում կատարած անձի համառոտ բացատրությունը» բաժնում առկա է ձեռագիր գրառում՝ հետևյալ բովանդակությամբ. «Առարկում եմ քանի որ գործարքի ժամանակ ես տեղյակ չեմ եղել, որ պետք է պարտավորություն առաջանա, իսկ մինչև մարտ ոչ ոք ինձ չի ծանուցել, որ ես պարտավորություն ունեմ, տեղյակ չեմ եղել դրա գումարից առաջացել է տույժ և տուգանք»:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի պետ Ս. Զախարյանի կողմից անհատ ձեռնարկատեր Տիգրան Ավետիսյանին ուղղված 02.10.2017թ. ծանուցագրի համաձայն. «Հայտնում ենք Ձեզ, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների Դուք 02.10.2017թ.-ի դրությամբ ունեք 764.956 դրամ չկատարված պարտավորություն, որից եկամտահարկ՝ ԱԱՀ՝ 764.956 դրամ: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ ընկերության չկատարված վերը նշված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով: Ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների առաջարկում ենք ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11<sup>00</sup>-ին ներկայանալ վարչական վարույթին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշված վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունները և (կամ) առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Սասունցի Դավթի փողոց, 87Ա շ., 4-րդ հարկ: Սույնով չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ: Տեղեկացնում եմ նաև, որ վերը նշված հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից կարող է կիրառվել դրամական միջոցների և գույքի արգելադրում համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի»:

Համաձայն փոստային ծրարի հանձնման թիվ AG004277253AM ծանուցագրի՝ նշված ծանուցագիրը հանձնվել է Բողոք բերած անձին:

- Բողոք բերած անձը 13.12.2017թ. գանգատ է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ խնդրելով վերացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի

իրավաբանական վարչության պետի 26.10.2016թ. թիվ 2415/08 որոշումը և հաշվարկված տույժն ու տուգանքը:

- Գանգատի քննության արդյունքում Գանգատարկման հանձնաժողովի կողմից 19.01.2018թ. կայացվել է թիվ 3/4 որոշումը, որով գանգատը մերժվել է:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետ Վ. Հարությունյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի պետ Ս. Զախարյանին ուղղված զեկուցագրի համաձայն. «02.10.2017 թվականի դրությամբ Ա/Ձ Տիգրան Ավետիսյանի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա պարտավորությունը կազմում է 764.956 դրամ:

*Ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը, հաշվի առնելով հարկերը ժամանակին չվճարելու հանգամանքը՝ իրականացված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վերը նշված վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 և 30.2 հոդվածներով, հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով խնդրում են 764.956 դրամ գումարի չափով տրամադրել գույքի վրա արգելանք դնելու մասին ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հանձնարարագիր: (...):»:*

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 19.12.2017թ. թիվ ԱՀ036966 հանձնարարագրի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետներ Վ. Հարությունյանին և Ս. Պետրոսյանին հանձնարարվել է Ա/Ձ Տիգրան Ավետիսյանին պատկանող գույքի վրա 764.956 ՀՀ դրամ չկատարված պարտավորությունների չափով արգելանք դնել (հիմք՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդված):

#### **4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.**

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքը ենթակա է բավարարման՝** հետևյալ հիմնավորմամբ.

Հանձնաժողովը սույն բողոքի քննության համար էական է համարում հետևյալ հարցադրմանն անդրադառնալը.

- Գանգատարկման հանձնաժողովն արդյո՞ք իրականացրել է գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, արդյո՞ք փորձել է բացահայտել վարույթի մասնակցի օգտին առկա փաստական հանգամանքները, թե՛ ոչ:

Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որն անմիջականորեն հանգեցրել է գործի սխալ լուծման՝ հետևյալ հիմնավորմամբ.

Գանգատարկման հանձնաժողովին բողոքարկվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի 26.10.2017թ. թիվ 2415/08 որոշումը՝ Ա/Ձ Տիգրան Ավետիսյանից 764.956 ՀՀ դրամ գումարի գանձման վերաբերյալ:

Վերոհիշյալ որոշման ուսումնասիրությունից հետևում է, որ առնվազն անորոշ է այն հանգամանքը, թե ինչ հարկային պարտավորության գանձման վերաբերյալ է այն, մասնավորապես՝ ըստ նշված ակտի բովանդակության. «... Արդյունքում ժամանակին չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 764.956 դրամ, որից ԱԱՀ-ի տուգանք՝ 764.956 դրամ, որն առաջացել է 2016թ. 4-րդ եռամսյակի հաշվարկը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու հետևանքով»: Նշված վարչական ակտում որպես իրավական հիմքեր սահմանված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 29.1-րդ հոդվածները, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 11-րդ մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածները:

Վերոհիշյալ իրավական հիմքերը վարչական ակտում առկա արարքի փաստական նկարագրության հետ համադրելու արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ վարչական ակտը չի ներառում ինչպես գանձման առաջադրված գումարի ձևավորման փաստական հիմքը և հաշվարկը, այնպես էլ այն իրավական նորմը, որի խախտումն առաջացրել է համապատասխան տուգանքը և հիմք հանդիսացել դրա հաշվարկման համար:

**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի** համաձայն՝ գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով



սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

**Նույն օրենքի 56-րդ հոդվածի** համաձայն.

«1. Վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի:

2. Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում»:

**Նույն օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Ընդ որում, **նույն հոդվածի 2-րդ մասը** սպառիչ սահմանում է այն դեպքերը, երբ վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում, որոնք բացակայում են քննարկվող գործի շրջանակներում:

Գանգատարկման հանձնաժողովը պատշաճ չի ուսումնասիրել և որևէ գնահատական չի տվել վերոհիշյալ փաստական հանգամանքներին, որպիսի պարագայում խախտվել են նաև Գանգատարկման հանձնաժողովի որոշմանը՝ որպես վարչական ակտին ներկայացվող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածների պահանջները, ինչն ուղղակիորեն ազդել է գործի ելքի վրա:

Նշվածի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ առկա է Գանգատարկման հանձնաժողովի 19.01.2018թ. թիվ 3/4 որոշումն անվավեր ճանաչելու՝ «**Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին**» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված հիմքը:

**Նույն օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի** համաձայն՝ վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝ սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «ա» կետի պահանջներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա/Ձ Տիգրան Ավետիսյանի 07.03.2018թ.-ի վարչական բողոքը բավարարել. բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 19.01.2018թ. թիվ 3/4 որոշումը և փոփոխել հետևյալ բովանդակությամբ. *«Ա/Ձ Տիգրան Ավետիսյանի բողոքը բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 26.10.2017թ. թիվ 2415/08 որոշումը»:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ